«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում
ԱՌԱՐԿԱ	Ֆիզիկա
ՀԵՂԻՆԱԿ	Մինասյան Բելլա
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Ձիթհանքովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. ԳԼՈՒԽ 1. Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

1.1 Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա ----------4

1.2 . Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա----------9

3. Եզրակացություն----------14

4. Գրականության ցանկ----------15

Ներածություն

Ուսուցչի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է ուսումնական գործընթացի ընթացքում: Մեծ է ուսուցչի՝ որպես կրթողի դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում, սակայն ուսուցիչն ավելի վստահ ու գործուն է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ: Այս առումով առանցքային է երկու սուբյեկտների առողջ համագործակցումը, խնդիրների միասնական վերհանումը, դրանց լուծումները փնտրելու ճանապարհին փոխգործակցությունը: Ստացվում է, որ երկու կողմերը այս գործընթացում փոխլրացնում են միմյանց՝ նպատակ ունենալով անցնցում ապահովել սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքը: **Հետազոտության թեմայի արդիականությունը**: Սույն հետազոտության արդիականությունության համար հենք է հանդիսանում սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքը և այդ իրավունքի իրացման ճանապարհին ծնող-ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումն այն համատեքստում, որ երկու կողմն էլ շահագրգիռ են, որ այդ իրավունքի իրացման գործընթացը լինի արգասաբեր, հաջողություններով ու հաղթանակներով լի:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ծնող-ուսուցիչ կապի դրական ազդեցությունը սովորողների դաստիարակության, ուսումնառության, ընդհանուր զարգացման ու աշխարհաճանաչողության վրա:

Հետազոտության խնդիրը: Սահմանել այն եղանակներն ու ձևերը, որոնց շրջանակներում ծնողն ու ուսուցիչը միմյանց փոխօգնելով ու փոխլրացնելով նպաստեն սովորողի զարգացմանը և դաստիարակությանը:

ԳԼՈՒԽ 1. Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

1.1 Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա

Չկա ընտանիք, որտեղ ժամանակ առ ժամանակ չլինեն կոնֆլիկտներ (տարաձայնություններ): Գուցե իսկապես պատահական չէ մեծերի կողմից պարադոքսի նման հնչող այն խոսքը, որ եթե ընտանիքում չկան վիճաբանություններ, ապա այնտեղ ինչ-որ բան կարգին չէ: Ընտանեկան տարաձայնությունները հնարավորություն են ստեղծում թուլացնել լարված մթնոլորտը, հասկանալ մեր կողքին ապրող մարդկանց տեսակետներն ու համոզմունքները: Ի վերջո տարաայնությունները նաև կարելի է դիտարկել իբրև «նուրբ ազդակ», որի միջոցով ստուգվում է ներընտանեկան կայունությունը և ի հայտ եկող խնդիրները համատեղ լուծելու կարողության ու ցանկության առկայությունը: Սակայն առավել զգուշավոր պետք է լինեն այն ընտանիքները, որտեղ կան մարդիկ, ովքեր նոր են ծանոթանում կյանքի բազմաթիվ դրսևորումներին և դեռևս մեծ կախվածության մեջ են գտնվում ընտանիքի առավել փորձառու անդամներից: Խոսքն իհարկե երեխաների մասին է, որոնց հոգևոր և ֆիզիկական ճիշտ զարգացումն ու կայունությունը պետք է գերակա նպատակ լինի ընտանիքի բոլոր անդամների համար և ուղենիշ հատկապես ծնողների հարաբերությունները կարգավորելու գործընթացում:

Սուրբ Գրքում՝ Աստվածաշնչում ընտանիքի մասին խոսվում է 32 անգամ: 12 սուրբ մարգարեներից մեկը՝ Միքիան Հին Կտակարանի Միքիայի գրքի 7:6 գլխում ասում է.

«Որովհետև որդին անարգում է հորը, աղջիկը վեր է կենում իր մոր վրա, հարսն իր սկեսրի վրա, մարդիս թշնամիներն իր ընտանիքն են»:

Ճիշտ նույն միտքն է ներկայացվում նաև Նոր Կտակարանում՝ Մատթեոսի 10:36 գլխում: Ընտանիքն այն «լաբորատորիան» է, որտեղ ձևավորվում է անձը: Եվ ինչպես ասում էր 19-րդ դարի ռուս դրամատուրգ և փիլիսոփա Լև Տոլստոյը՝ բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար և յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի: Ընտանիքում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն մեծապես նպաստում է երեխայի զարգացման և աշխարհայացքի ձևավորման վրա: Կարևոր է որոշել, թե տվյալ իրադարձությունն ինչպիսի՞ հետևանքներ կարող է թողնել և որչա՞փ է դրա ազդեցությունը, կարճաժամկե՞տ է, թե՞ երկարաժամկետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան փոփոխությունները (հատկապես ամուսնալուծություն, ընթացիկ տարաձայնություն կամ նոր ամուսնություն) էապես փոխում են երեխայի վարքը, երբեմն դարձնում ագրեսիվ, երբեմն՝ ինքնամփոփ կամ ինքնուրույն:

Ընտանեկան կայուն համակարգի բաժանումը (ամուսնալուծությունը կամ ընտանիքի անդամի կորուստը) առաջացնում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- եկամտի փոփոխություններ (սոցիալական-ֆինանսական վիճակի ճգնաժամ)
- հայրական / մայրական բացակայություն (հետևաբար, երեխայի վրա ազդեցության թուլացում)
- անբավարար մայրական / հայրական հոգեկան առողջություն (առանձին դեպքերում)
- միջանձնային տարաձայնություններ, որոնցից կարող են ծագել նորերը
- ցածր վարկանիշային ընտանեկան մթնոլորտ, ծնող-երեխա հարաբերությունների արագ անկում
- կրթության անցում հետի պլան հանուն նյութաֆինանսական միջոցների հայթայթման

Շատ դեպքերում երեխայի դաստիարակության գործում ի հայտ եկող խնդիրները պայմանավորվում են ոչ միայն ընտանեկան բաժանումներով, այլև ծնողների զբաղվածության մակարդակի աճով, որի արդյունքում հետին պլան են մղվում բազում կարևորագույն հարցեր: Աշխարհագետների շարունակական ուսումնասիրման տակ են աշխարհի բնակչության կառուցվածքն ու աճը ներկայացնող սեռատարիքային բուրգերը, որոնք ցույց են տալիս, որ արագ տեմպերով զարգացող և զարգացած երկրներում ահագնանում է ծնելիության մակարդակի անկումը, առողջապահական համակարգի աստիճանական զարգացմանը զուգընթաց աճում է կյանքի միջին տևողությունը և բնակչությունը գնում է դեպի ծերացում: Վերջին տասնամյակներում

փոխվել են ընտանիքին առնչվող շատ կարծրատիպեր: Ներկայումս համաշխարհային հասարակության 62%-ը հաջողակ է համարում այն ամուսնությունը, որում երկու կողմերն էլ աշխատում են (ըստ որում, այլևս չի նշվում ամուսինների սեռային պատկանելիությունը): Աշխարհի ամուսնացած կանանց 28%-ն ունեն լավագույն կրթություն, հետևաբար, նրանք ինքնամոռաց նվիրվել են իրենց կարիերային:

Շատ դեպքերում ընտանեկան անտարբերությունը ծնում է նոր կոնֆլիկտ, որը ստանում է շարունակական բնույթ: Դա երեխաների մոտ հետզհետե առաջացնում է զայրույթ, անհանգստություն, տխրություն, առողջական խնդիրներ, որոնց մասին նրանք դադարում են բարձրաձայնել, կարծելով, որ ընտանիքում այդ պահին կան ավելի կարևոր հիմնահարցեր, քան իրենք են: Նաև կորում է ինքնավստահության ու անվտանգության զգացումը, որի երաշխավորները հենց ընտանիքի մեծահասակներն են: Հատկանշական է քնի խանգարումն ու դպրոցում կենտրոնանալու դժվարությունը: Սա աստիճանաբար փոխարկվում է միջավայրի երևույթների նկատմամբ անտարբերության, ապա անվստահության առաջացման, գիտության, արվեստի, սպորտի նկատմամբ հետաքրքրասիրության կտրուկ նվազման և հետագայում կարող է արտահայտվել ագրեսիայի, նախանձի ու թշնամանքի (քանզի նա հետ է մնում մյուսներից), հակահասարակական պահվածքի, հանցագործության և վանդալիզմի դրսևորումներով: Ահա թե ինչու, երբեմն վատ ճանապարհով սկսում են գնալ այն ընտանիքների երեխաները, որտեղ թվում էր թե ամեն բան հիանալի է, մինչդեռ խնդիրն աշխատանքով պայմանավորված անտարբերության կամ դրանից բխող կոնֆլիկտների մեջ է:

Այս ամենից բացի կոնֆլիկտային ընտանիքների երեխաները մեծ հաշվով խնդիրներ են ունենում միջանձնային հարաբերություններում, դժվարանում են լուծումներ գտնել և շատ անգամ էլ դրանք փնտրում են վատ միջավայրում: Այս ամենը բացասաբար են անդրադառնում պատանեկության և հասունության անցման տարիքում նրանց ռոմանտիկ հարաբերությունների վրա, քանզի ընտանեկան բախումներն իրենց պատճառահետևանքային կապերով նպաստում են այն բանին, որ երեխան ավելի բացասաբար ընկալի սոցիալական միջավայրը, ունենա վատ տպավորություններ և պատկերացումներ ընտանեկան հարաբերությունների և արժեքների մասին: Այսպիսով, մի զույգի կոնֆլիկտային անկայուն հարաբերությունը կարող է առաջացնել մեկ այլ բացասական հարաբերություն հաջորդ սերնդում:

Հատկանշական է, որ սթրեսն առաջացնում է որոշակի ֆիզիոլոգիական ռեակցիաներ, որոնք կարող են վնասել ուղեղի զարգացմանը: Երեխան կարող է նաև դիմագրավել դրան, շնորհիվ գենետիկական հատկանիշների կամ բաձր դիմադրողականության, թեև գիտական հետազոտությունները փաստում են, որ բոլոր դեպքերում ծնողական կոնֆլիկտն անդրադառնում է երեխայի ֆիզիկական զարգացման ու հոգեկերտվածքի ձևավորման վրա, անգամ եթե նա որդեգրված զավակ է:

Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը սովորաբար աստիճանաբար նվազում է միայն 2-3 տարվա ընթացքում, սակայն կարող են մնալ նաև անդառնալի հետևանքներ: Վիճակագրական տվյալների համաձայն աշխարհում երիտասարդների 41%-ը հեռանում է ընտանիքից վատ հարաբերությունների պատճառով:

Շատ կարևոր է ներընտանեկան խնդիրների հաղթահարումը համատեղ ջանքերով: Ընտանեկան հակամարտությունը ծագում է ընտանիքի տարբեր անդամների տեսակետների և/կամ համոզմունքների բախումից, որի արդյունքում կողմերը գալիս են սխալ եզրակացությունների և երկուստեք մեղադրանքների: Հատուկենտ դեպքերում, երբեմն, կոնֆլիկտը կարող է նաև որոշակի դրական ազդեցություն ունենալ, բարձրացնելով, ասենք, երեխայի իրավագիտակցությունը, արդարամտությունը կամ ընտանեկան կայունության կարևորության մասին գիտակցությունը, եթե այն ընթանում է ոչ բռնի, հանգիստ պայմաններում և կողմերը պատրաստակամորեն լսում են միմյանց, հայտնում դիրքորոշումները, որոնք բերսում են խնդրի խաղաղ կարգավորման: Կոնֆլիկտների հաղթահարման համար հարկավոր է իմանալ, որ

1. պետք է զատել խնդիրը մարդուց,
2. միշտ սպասել և միայն որոշ ժամանակ անց դատել սառը գլխով,
3. հիշել, որ գաղափարը կայանում է ոչ թե փաստարկը շահելու, այլ հակամարտությունն ի վերջո լուծելու մեջ,
4. հիշել, որ մյուս կողմում անձ է, ով պարտավոր չէ համաձայնել դիմացինի ամեն բառի հետ,
5. պետք է սահմանել խնդիրը և երբեք չշեղվել այլ հարցերի ուղղությամբ,
6. պետք է խոսել ցածրաձայն, հստակ և ողջամիտ,
7. հիշել, որ խելացի մարդը միշտ կարող է ելք գտնել:

Պետք է կարևորություն տալ ընտանեկան ավանդույթներին: Անկախ ստեղծված իրավիճակից երբեք չդադարեցնել երեխայի կրթության խիստ վերահսկողությունը, ապահովել նրա առողջ ժամանցը, շփումն ընկերների, կենդանիների հետ, կազմակերպել բազմաժանր ֆիլմերի դիտումներ, բազմաժանր երաժշտության ունկնդրումներ, ընթերցանություն և ձեռքի աշխատանքների պատրաստում, որոնք խթանում են երեխայի առողջ դատողության զարգացումը, բաձրացնում արժեհամակարգը, զբաղեցնում այնպես, որ նա երբեք էլ չնկատի առկա խնդիրը: Հմտորեն ներգրավվել երեխային խնդրի դրական հանգուցալուծման մեջ և ապահովել ընտանիքի ու երեխայի կայուն զարգացումը:

Հիշեք, որ Հիսուսն ասում էր.

«Եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայություն չեք մտնի»:[1, էջ 4-8]:

1.2 . Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա

Մանկավարժական գործունեության արդյունավետությունը բնութագրվում է մասնագիտական որակների անընդհատ կատարելագործմամբ և մեծ չափով պայմանավորված է կրթական գործընթացի հայեցակարգային հիմքերի խոր տեղաշարժերով: Ներկա պայմաններում մանկավարժի մասնագիտական գործունեության կարևոր բնութագիր է դառնում համաշխարհային կրթական գործընթացներին համապատասխանությունը, աշխարհաքաղաքական զարգացումներին համահունչ կրթական քաղաքականության իրականացումն ու մասնագիտական խնդիրների լուծման ռազմավարության մշակումը: Կրթության նոր հայեցակարգի մշակման տեսանկյունները վերաբերում են ուսուցչի և աշակերտի փոխգործակցության ձևերին, սովորողի արժեքային համակարգի ձևավորմանը, նրա իրականացման միջոցներին և եղանակներին: Ուսուցման ավանդական համակարգում առկա են ոչ միայն առարկայական, մանկավարժամեթոդական, այլև դաստիարակչական հիմնախնդիրներ, որոնց անդրադարձել են նշանավոր մանկավարժներ, փիլիսոփաներ, հոգեբաններ, և որոնք տակավին լուծված չեն:

Խոսելով դաստիարակչական հիմնախնդիրների մասին՝ նշենք, որ ներկայումս դրանք առավել սուր բնույթ են կրում: Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից պայմաններում երեխայի մանկությունն ընթանում է այնպիսի սոցիումում, որին բնորոշ են արժեքային սնակությունը, հստակ նպատակային կողմնորոշիչների բացակայությունը, սոցիալական շերտավորումների խորացումը, մանկական և պատանեկան միջավայրերում ձևավորվող կոնֆլիկտները, ընտանեկան դաստիարակության բացթողումները[2]:

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են հավարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Ուսուցչը ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, վերջինիս կողմից ուսուցչի հետ համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Սովորողի կրթական կարիքների հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և

ընտանիքի փոխներգործության հիմքում պետք է դրված լինեն ընդհանուր հետաքրքրություններն ու նպատակները: Այդ փոխհարաբերությունների հիմքում պետք է դրվեն միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքները: Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը: Սովորողին, ծնողներին և ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ, խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով» [3]: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են՝

1. Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում.
2. Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը.
3. Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը.
4. Սխալների ընդունումը,վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը.
5. Սեփական շահի ստորադասումը.
6. Անձնային բարձր որակների դրսևորումը:

Այս երկու օղակների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից է ծնողների իմացական կարողությունները , հայացքներն ու դիրքորոշումները: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին: Երբ ծնողը ներգրավված է

զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում :

Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը: Անկախ ընտանիքի սոցիալտնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով: Այն սովորողները, ում ծնողներն ավելի բաց են համագործակցության համար, հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների վարքով ու առաջադիմությամբ, ավելի են մոտիվացվում: Արդյունքում, նրանք դառնում են ավելի պատասխանատու, բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ: Անշուշտ, ծնողների ներգրավվածությունը դպրոցի, դասարանի սովորողի դպրոցական կյանքին դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը նպաստում է վերջիններիս հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը՝ ստեղծելով բարոյահոգեբանական կայուն միջավայր: Այսուհանդերձ, այս համագործակցության շրջանակներում հնարավոր են նաև կոնֆլիկտներ, անհամաձայնություններ, որոնք կարող են վնաս բերել բուն ուսումնական գործընթացին, մտցնել լարվածություն: Ուստի շատ կարևոր է երկուստեք պահպանել բարեվարքության կանոնները, լսել խնդիրն ու բերել հիմնավոր փաստարկներ, չառաջնորդվել բացառապես սեփական շահով: Դպրոցում տարբեր կոնֆլիկտների զանազան պատճառներ կան, բայց որքան էլ տարօրինակ թվա, կարող է նման իրավիճակ ստեղծվել սովորողի և ուսուցչի միջև: Ի վերջո, դպրոցում երեխաները խաղում են, հաճախ չեն ենթարկվում, երբեմն էլ հրաժարվում են դասին մասնակցել: Ուսուցիչը, իհարկե, դիտողություն է անում, փորձում ինչ-որ կերպ ազդել՝ արդյունքում ծնողին հրավիրելով դպրոց: Այս պարագայում եթե ծնողը փոխըմբռնում չի գտնում ուսուցչի հետ, ապա դա կարող է բացասաբար անդրադառնալ հենց սովորողի վրա վրա: Արդյունքում ստեղծվում է ՝ ուսուցիչ-սովորող-ծնող

կոնֆլիկտ: Ցանկացած պարագայում բախումը սովորողի և ուսուցչի միջև անթույլատրելի է, հարկավոր է միշտ պահպանել էթիկայի կանոններն ու իմանալ սեփական իրավունքներն ու պարտականությունները: Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ կրթության համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը, պետք է մշտապես համագործակեն դպրոցի մանկավարժական աշխատողների հետ:

Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե' ուսուցիչը, թե սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Ժողովի ժամանակ էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճն ու նպատակը: Ուսուցիչը նախ և առաջ ծնողի համար ներկայացնում է առկա խնդիրը կամ իրավիճակը, խոսում դրա հնարավոր դրական ու բացասական ենթատեքստի ու զարգացման հնարավոր սցենարների, հետևանքների մասին: Այստեղ կարևոր է ծնողական համայնքի արձագանքը՝ հետադարձ կապ ստեղծելու կարողությունը: Շատ կարևոր է, որ ծնողն ընդունի և' դրական և' բացասական կամ քննադատողական դիտարկումները: Շատ հաճախ՝ վերջին դիտարկումների պարագայում, ծնողները ցուցաբերում են անհավասարակշիռ ու պաշտպանողական վարքագիծ: Մինչդեռ, շատ կարևոր է արձանագրել խնդիրը, դնել այն քննարկման, որպեսզի դրան հետևի լուծումներ գտնելու հնարավոր հիմնախնդիրներն ու բացթողումները շտկելու փուլը: Կարևոր է, որ ծնողն այս պարագայում լինի հավասարակշռված, հասկանա խնդրի բուն էությունը, դրանից բխող հետևանքներն ու հնարավոր վտանգները: Այս առումով անկյունաքարային է ուսուցչի մոտեցումը:

Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել ուսուցչի և դպրոցի մյուս մանկավարժական աշխատողների աջակցության և օգնության վրա:

Կարող ենք վերահաստատել այն պնդումը, որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողի կրթության կազմակերպան ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն, քանի որ լավ ու գիտակից սերունդ ունենալը թե' դպրոցի, թե' ընտանիքի համատեղ ջանքերի արգասիքն է:

Եզրակացություն

Վերլուծելով աշխատանքի բովանդակությունը կարելի է գալ այն եզրակացություններին, որ՝

1.Ուսուցիչն առանցքային դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին ներգրավելու առումով:

2.Ուսուցիչն ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար պետք է համագործակցային հարաբերություններ ստեղծի սովորողների, վերջինիս ծնողի կամ օրինական ներկայացուցիչների, այլ մանկավարժական աշխատողների հետ:

3.Ուսուցիչը՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչ և պատասխանատու, զարգացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը՝ սերտորեն համագործակցելով սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ:

4. Ուսուցիչը պարտավոր է սովորողի զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկություն տալ սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցիչներին՝ ակնկալելով նրանցից հետադարձ կապ:

5. Ընտանիքում հնարավորին չափ հարկավոր է խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, հատկապես երեխաների առկայության պարագայում:

6. Անխուսափելի կոնֆլիկտների դեպքում առավել ուշադիր լինել երեխաների հուզական ներաշխարհի կայունության պահպանման և ֆիզիկական զարգացման խնդիրներին:

Գրականության ցանկ

1. Ենգիբարյան Տ. «Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա և հնարավոր լուծումները»//: Երևան: 2019:

2. Զադոյան Ա. Մ., «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում»//: ՇՊՀ: 2014:

3. ՀՀ օրենքը հանրակրթության մասին :ՀՕ-160-Ն: 10.07.2009